Զրույց ծնողների և երիտասարդների հետ ֆենտանիլի մասին

ՖԵՆՏԱՆԻԼԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Լոս Անջելես վարչաշրջանում դեռահասների շրջանում գերդոզավորումից մահացությունը կրկնապատկվել է 2019-ից 2020 թվականներին (Covid-19 համավարակի ընթացքում), իսկ 2021 թվականին ֆենտանիլը ողջ երկրում՝ գերդոզավորումից դեռահասների մահվան դեպքերի մոտ 77%-ի պատճառ է հանդիսացել: Մենք հասել ենք Լոս Անջելես վարչաշրջանի պատմության մեջ գերդոզավորման վատթարագույն ճգնաժամին: Տեղանքում գրանցված վերջին ողբերգություններից է Լոս Անջելես վարչաշրջանի երեք երիտասարդների դեպքը, ովքեր 2022 թվականի մայիսին ստացել են ֆենտանիլով վարակված MDMA-ի գերդոզավորում: 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Bernstein ավագ դպրոցում սովորող 15-ամյա աշակերտին մահացած են գտել Հոլիվուդի համալսարանի շենքում ՝ ֆենտանիլ պարունակող հաբ կուլ տալուց հետո: Գերդոզավորման առնվազն 7 դեպք է գրանցվել Լոս Անջելես վարչաշրջանի այլ երիտասարդների մոտ:

Ֆենտանիլն այժմ հնարավոր է գտնել կեղծ հաբերի և այլ արգելված դեղերի մեջ՝ Լոս Անջելեսի վարչաշրջանում, իսկ ֆենտանիլի առկայությունը առաջացնում է գերդոզավորում և մահացություն: Գերդոզավորումից մահվան դեպքերն այլևս չեն տարածվում հիմնականում նրանց վրա, ովքեր պարբերաբար օգտագործում են դեղերը: Ֆենտանիլի պատճառով մենք ականատես ենք լինում, թե ինչպես են մարդիկ գերդոզավորվում և մահանում, երբ առաջին անգամ օգտագործում են արգելված նյութը կամ կեղծ հաբերը:

Զրույցները կարող են կյանքեր փրկել:

<u>Ի՞նչ տեղեկացնել երիտասարդներին ֆենտանիլի և գերդոզավորման մասին.</u>

1) Յուրաքանչյուր ոք, ով օգտագործում է արգելված նյութեր (օրինակ՝ կոկաին, մետամֆետամին, MDMA (էքստազի) կամ հերոին), կեղծ հաբեր (ձեռք է բերվել առցանց մատակարարներից կամ անձամբ մատակարարից, ինչպիսիք են՝ օքսիկոդոնը, մորֆինը կամ հանգստացնող միջոցները, ինչպիսին է՝ Xanax), կամ ով ստանում է դեղամիջոցներ, որոնք իրեն նշանակված *չեն* և վերցնում է դեղատնից,վտանգված է գերդոզավորում ստանալու համար:
2) Ֆենտանիլը հայտնաբերվել է բազմաթիվ արգելված նյութերի և կեղծ հաբերի մեջ: Թմրավաճառները միշտ չէ, որ գիտեն, թե ինչ կա իրենց վաճառած հաբերի մեջ:
3) Եթե դուք պատրաստվում եք փորձարկումներ կատարել նյութերով.
    a. Ունեցեք նալոքսոն (Նարկան):
    b. Մի օգտագործեք միայնակ (ունեցեք ձեր մոտ մեկին, ով կարող է վերահսկել գերդոզավորման դեպքը և կիրառել նալոքսոնը (Նարկան)) կամ զանգահարեք NeverUseAlone՝ 1-800-484-3731 հեռախոսահամարով:
    c. Ստուգեք ֆենտանիլի հնարավոր առկայությամբ նյութերը՝ ֆենտանիլի թեստով, որը կարելի է առցանց գնել BTNX, Dose Test, Dance Safe, Wisebatch, կամ TACO:
    d. Մի գնեք նյութեր անհայտ աղբյուրներից:

4) Խնդրում ենք խորհրդակցել ձեր խորհրդատուի, մանկաբույժի, թերապևտի, ծնողների հետ, եթե ցանկանում եք օգտագործել թմրամիջոցներ:

Ինչպես պետք է ծնողները զրուցեն իրենց երեխաների հետ ֆենտանիլի և թմրանյութերի մասին.

1. Ձեր երեխաների հետ թմրանյութերի մասին բաց և ազնիվ զրույցներ անցկացրեք վաղ տարիքում և հաճախ:
2. Հստակեցրեք ձեր ակնկալիքները:
    a. «Խելացի՛ եղիր» արտահայտությունը ձեզ համար կարող է մի բան նշանակել, ձեր երեխայի համար՝ մեկ այլ բան: Ուղի՛ղ եղեք, ասելով՝ «Ես ակնկալում եմ, որ դու խմելուց հետո մեքենա չես վարի կամ ապօրինի նյութեր չես օգտագործի»-ի նման մի բան, որն ավելի պարզ է:
3. Օգտագործեք իրենց տարիքին համապատասխան լեզու և համատեքստ՝ օգնելու նրանց հասկանալ, թե ինչ կարող է անել ապօրինի թմրանյութն իրենց հետ:
    a. Տարրական դասարանների երեխաների համար. քննարկեք այն, որ նա չպետք է ընդունի այլ անձին պատկանող դեղամիջոցներ, և որ նա դեղեր պետք է ընդունի միայն այն ժամանակ, երբ դա նշանակվել է իր բժշկի կողմից կամ հաստատվել է իր ծնողների կողմից:
    b. Դեռահասների համար. փորձեք հարցեր տալ այն մասին, թե ինչ գիտեն թմրամիջոցների մասին և թույլ տվեք, որ նրանք կիսվեն ձեզ հետ: Տրամադրեք ճշգրիտ տեղեկատվություն, եթե նրանք հարցեր են տալիս, և եղեք ազնիվ, երբ ինչ-որ բան չգիտեք և միասին տեղեկատվություն փնտրեք: Խուսափեք նրանց դասեր տալուց:
4. Ստեղծեք անվտանգ, առանց մեղադրանքների մթնոլորտ:
5. Միշտ լսեք, թե ինչ գիտեն նրանք և հնարավորինս ազնիվ պատասխանեք նրանց հարցերին:
6. Օգնություն խնդրեք, երբ դրա կարիքն ունեք:
7. Լրացուցիչ խորհուրդները ծնողների և ընտանիքների համար հասանելի են՝ այստեղ և այստեղ:

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ www.RecoverLA.org կայքը: